

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
(լրամշակված)

Նախաձեռնող՝

Հ. Գուլանյան

Երևան – 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	9
1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը (օգտագործվող բնատեսույթներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	12
1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	16
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	18
2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	18
2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	19
2.3 Նախատեսվող գործունեության տարածքի հիդրոերկրաբանական բնութագիրը	21
2.4 Կլիմա	23
2.5 Մթնոլորտային օդ	25
2.6 Աղմուկի մակարդակ	26
2.7 Ջրային ռեսուրսներ	27
2.8 Հողային ծածկույթ	28
2.9 Բուսական և կենդանական աշխարհ	32
2.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	38
2.11 Պատմամշակութային հուշարձանների ցանկը	43
3. ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	43
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	47
4.1 Հիմնական բնապահպանական ռիսկերը	47
4.2 Շինարարության ընթացքում ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները	48
5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ, ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	49
5.1 Մթնոլորտային օդ	51
5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր	52
5.3 Հող	52
5.4 Թափոններ	52
5.5 Բուսական և կենդանական աշխարհ	58
5.6 Պատմամշակութային արժեքներ	60

5.7 Սոցիալական ազդեցություն	61
5.8 Բնապահպանական մշտադիտարկումների պլան	62
Օգտագործված գրականության ցանկ.....	66

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործունեների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները. նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ` պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք,

ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպում.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական

արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ

Ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

բնապահպանական կառավարման պլան՝ շինարարական աշխատանքների ընթացքում բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հրանտ Մաքսիմի Գուլանյանը ծնված 12.11.1982թ, նույնականացման քարտ 010575611 տրված 050-ի կողմից, (այսուհետ Նախաձեռնող) նախատեսում է հիմնել ձկնաբուծան ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքի իրեն պատկանող Նոր թաղամասի 12-րդ փողոց 43-րդ հողամաս հասցեում:


«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի Հոդված 14-ի 6-րդ մասի 3-րդ կետի ա. ենթակետի համաձայն, այն է՝ «ջրամբարներ, արհեստական լճեր, ջրավազաններ՝ 100000-1մլն.խմ», նախատեսվող ավազանների կառուցման շինարարական աշխատանքներն ենթակա են Գ կատեգորիայով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման սույն հայտը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ Ռանչպար համայնքում ձկնաբուծական տնտեսության ավազանների կառուցում:



Նախատեսվող գործունեության նպատակն է՝ թվով 2 ավազանների կառուցում և Գետածածան, Լոքո և Պնդաճակատ ձկնատեսակների բուծում: Վարչական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում: **Նախաձեռնողը նախատեսում է ջրառը իրականացնել է տարածքում առկա փոստրակից պոմպի միջոցով: Նախատեսվող ջրառի կոորդինատներն են X=40° 01' 04.3" , Y=44° 22' 41.3" , H=823 մ:**



Նկար 2. Իրավիճակային քարտեզ

Հատված Google Earth քարտեզից, նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքի և հարևան համայնքների հեռավորությունների ցուցադրումով:

Գործունեության համար նախատեսվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են.

Կոորդինատական համակարգը ARM WGS84

Աղյուսակ 1

Կոորդինատներ		
	X	Y
1	8446728.1192	4432061.2034
2	8446709.3660	4432095.1609
3	8446704.7899	4432101.6589
4	8446698.7088	4432113.8101
5	8446693.9138	4432122.7342
6	8446693.6467	4432142.6795
7	8446693.8527	4432152.7677
8	8446693.9297	4432166.4879
9	8446690.9917	4432174.8400
10	8446686.6846	4432179.8881
11	8446683.6566	4432181.1121
12	8446679.6915	4432181.8921
13	8446668.1314	4432184.1861
14	8446655.7792	4432187.3502

15	8446639.3930	4432192.8222
16	8446623.1168	4432198.5743
17	8446604.2295	4432203.9124
18	8846601.1805	4432203.9164
19	8446599.1214	4432202.2634
20	8446590.2893	4432195.1723
21	8446583.5112	4432097.6919
22	8446573.6711	4432099.5179
23	8446568.9840	4432091.5938
24	8446568.9840	4432075.5545
25	8446565.6920	4432059.6023
26	8446545.2297	4431991.2123
27	8446541.3827	4431982.4852
28	8446539.3907	4431962.3889
29	8446538.3156	4431945.0007
30	8446536.8776	4431936.3435
31	8446534.4486	4431925.7754
32	8446531.6646	4431909.0641
33	8446530.0625	4431893.2389
34	8446527.6355	4431867.3485
35	8446525.9065	4431847.6203
36	8446525.1885	4431836.0491
37	8446524.0985	4431816.0438
38	8446524.0215	4431802.9046
39	8446524.4055	4431786.5974
40	8446527.8595	4431757.9410
41	8446537.6597	4431708.6013
42	8446536.8237	4431726.5815
43	8446538.6037	4431749.9559
44	8446538.3807	4431795.7135
45	8446540.4577	4431821.9049
46	8446540.8287	4431832.1620
47	8446544.4638	4431852.7873
48	8446549.4338	4431873.9536
49	8446552.9949	4431889.0499
50	8446557.4449	4431903.6731
51	8446564.3440	4431918.4433
52	8446568.2371	4431923.5974
53	8446571.0261	4431926.5454
54	8446573.5331	4431928.1614
55	8446575.9612	4431928.9874
56	8446773.4139	4431937.9376
57	8446769.1278	4431943.8497
58	8446764.5428	4431951.3068
59	8446760.8517	4431958.4509
60	8446757.9907	4431963.6430
61	8446753.9946	4431975.1671
62	8446752.7046	4431982.2112
63	8446751.6666	4431989.1423

64	8446751.4036	4431994.9674
65	8446748.5705	4432005.9996
66	8446742.7025	4432022.6068
67	8446735.5543	4432042.9731

1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը (օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Նախաձեռնողը պատրաստվում է կառուցել ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազան, և հետագայում շահագործումը ավելի օպտիմալ դարձնելու նպատակով բաժանել այն 2 ավազանների: (համապատասխանաբար՝ 1-ին ավազան – 11900 մ², 2-րդ ավազան –18900 մ² ընդհանուր 30800 մ² տարածքով: Ավազաններում նախատեսվում է բուծել Գետածածան, Լոքո և Պնդաճակատ ձկնատեսակներ, տարեկան 30-40 տոննա ծավալով: Այս ձկնատեսակները հատուկ են տարածաշրջանին և ինվազիվ տեսակ հանդիսանալու ռիսկ չեն պարունակում:

Ավազանների կառուցման նախագիծը կազմվել է «Ստարտ» ՍՊԸ-ի կողմից, համաձայն Ճարտարապետահատակագծային առաջադրանքի, որոնք կցված են սույն հայտին, որպես հավելվածներ: Ձկնատեսակներին բնական կենսամիջավայր ապահովելու համար ավազանները կկառուցվեն ավերից աստիճանաբար խորացումով, որտեղ առավելագույն խորությունը ավազանների միջնամասերում ըստ նախագծի կկազմի մինչև 3.5 մետր, իսկ եզրային թմբերի բարձրությունը՝ 1.5 մետր: Ավազանների միջնամասերում նման խորությունները հատուկ են ընտրված, որը հնարավորություն կտա այդ հատվածներում ջրաբուսականության չառաջացման և ավազանները ճահճացումից հնարավարինս գերծ պահելու համար: Ավազանների նման տեսքը կխթանի ավամերձ հատվածների բնական տրոֆիկ շղթայի ձևավորմանը, ինչը կհանդիսանա սնման աղբյուր և ձվադրավայր ձկների համար: Արդյունքում կստեղծվի ամբողջովին բնական կենսամիջավայր ձկների բնական վերարտադրության համար, որտեղ ձկների բնականոն աճը ապահովելու համար հավելյալ արհեստական կեր տալու անհրաժեշտություն չի առաջանա, ինչն էլ իր հերթին չի հանգեցնի ավազանների ճահճացման և կբացառի գարշահոտի տարածումը: Ավազանները կկառուցվեն փուլերով՝ 24 ամիսների ընթացքում, ինչը

Ժամանակ կտա ձկնատեսակների համար ավազաններում բնական կեսամիջավայրի ձևավորմանը: Ավազանների կառուցման ժամանակացույցը բերված է աղյուսակ 2-ում:

№№	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԱՐԻ							
		1				2			
		ԱՄԻՍՆԵՐ							
		1	2	3	4	1	2	3	4
1	ՏԱՐԱՇՔԻ ՀԱՐՁԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								
2	ԼՃԱԿՆԵՐԻ ՔԱՆՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								
3	ՊԱՏԵՐԻ ԵՎ ՀԱՏԱԿԻ ԱՄՐԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								
4	ԽԻՃՈՎ ՀԱՐՁԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								
5	ՏԱՐԱՇՔԻ ՄԱՔՐՈՒՄ								

Աղյուսակ 2: Աշխատանքների կատարման ժամանակացույց

Ավազանների կառուցումն իրականացվելու է կապալառու կազմակերպության միջոցով, որի հետ կնքված է նախնական պայմանագիր:

Ավազանների կառուցման համար բետոնային աշխատանքներ չեն նախատեսվում: Ավազանների կառուցման համար օգտագործվող տեխնիկաների ցանկը ներկայացված է ստորև.

- Էքսկավատոր ՅՕ-5111
- Էքսկավատոր ՅՕ-5111Ե
- Բարձիչ ԴՕ-18
- Բեռնատար ավտոինքնաթափ Կրա3 255
- 2 Բեռնատար ավտոինքնաթափ Կրա3 256 B1

Անհրաժեշտության դեպքում մեծ զանգվածով բեռներ տեղափոխելու համար (օրինակ՝ կոնտեյներային տիպի տնակների տեղադրում անձնակազմի հանգստի և պահակների համար) կօգտագործվի նաև ավտոկրունկ:

Թափոնների ծավալը նվազեցնելու նպատակով կապալառու կազմակերպության հետ կնքված նախնական պայմանագրի համաձայն ավազանների փորման աշխատանքների ընթացքում առաջացած հողագրունտի մի

մասը կօգտագործվի շինարարության ժամանակ խախտված տարածքների վերականգման, ավազանների եզրային բերմանների բարձրացման, և առկա ճանապարհների բարեկարգման նպատակով: Իսկ մնացած մասը կտրամադրվի (չօգտագործված շինարարական թափոններ, հողագրունտ) նույն ընկերությանը տեսակավորման և վերամշակման համար:

Աշխատանքների ավարտին չօգտագործված և չվերամշակված թափոնները (հողագրունտ) համապատասխան իրավասություն ունեցող մարմնի հետ համաձայնությամբ կտեղադրվի իրենց իսկ կողմից հատկացված վայրում:

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

- Ինժիներական անձնակազմ - 1 մարդ
- Արհեստագործներ և քանվորներ – 2 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ – 4 մարդ

Ջրամատակարարումը կատարվում է անձնակազմին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով շինհրապարակների, ավտոճանապարհների և ժամանակավոր լցակայանների մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուր բերվում է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը մատակարարվում է ջրցան լվացող ավտոմեքենայով:

Խմելու ջրի օրեկան ծախսը հաշվարկված է 25.0լ (0.025մ³) մեկ մարդու համար, տեխնիկական ջրինը ջրելու համար 0.5լ/մ²:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությունով՝

$$W = (N \times N + N1 \times N1) T$$

որտեղ՝

N - ԻՏ աշխատողների թիվն է - 1

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

N1 - քանվորների թիվն է - 6,

N1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (1 \times 0.016 + 6 \times 0.025) \times 260 = 43.16 \text{մ}^3/\text{տարի}$, միջին օրեկան 0.166մ³:

Տեխնիկական ջրի տարեկան ծախսը կազմում է՝ $Q_{տ} = q_1 + q_2 + q_3$

Որտեղ՝

q1- մերձատար և մուտքային ավտոճանապարհների ջրման համար պահանջվող ծախսն է;

q2- աշխատանքային հրապարակի ջրման համար պահանջվող ջրի ծախսն է;

q3- ժամանակավոր լցակույտերի մակերևույթի ջրման համար պահանջվող ջրի ծախսն է;

Ավտոճանապարհի ջրվող մակերեսը կազմում է՝ $S_1 = 500 \times 3 = 1500 \text{մ}^2$,

Աշխատանքային հրապարակի ջրվող մակերեսը կազմում է՝ $S_2 = 200 \text{մ}^2$,

Ժամանակավոր լցակույտերի մակերևույթի ջրվող միջին մակերեսը կազմում է՝ $S_3 = 500 \text{մ}^2$,

Տարեկան շոգ եղանակներով օրերի քանակը կազմում է 180օր, ջրելու հաճախականությունը օրվա ընթացքում ընդունված է 3 անգամ:

$Q_{տ} = 180 \times 3 \times 0.5 (1500 + 200 + 500) = 594 \text{մ}^3$:

Խմելու և տեխնիկական ջուրը մատակարարվելու է ցիստեռններով:

Ջրառի իրականացման համար լիազոր մարմնի հետ կկնքվեն համապատասխան ջրօգտագործման պայմանագրեր: Ջրառը կատարվելու է տարածքում առկա փոսորակից:

Արտադրական հրապարակը կազմակերպվում է ավազանների արևելյան հատվածում: Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովվելու նպատակով արտադրական հրապարակում տեղադրվելու են.

- վազոն գրասենյակ,
- վազոն հանդերձարան,
- ջրի տարողություն,
- հանգստի սենյակ
- ցնցուղարան
- զուգարան

- վառելիքի տարողություն,

Կենցաղային կեղտաջրերի տեղադրման համար նախատեսվում է բետոնային անջրաթափանց լցարան: Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային ջրօգտագործման արդյունքում: Աշխատակիցների բնական կարիքների համար կտեղադրվի զուգարան՝ բետոնային անջրաթափանց լցարանով: Շինարարության ընթացքում հնարավոր է նաև դիտարկել բիոզուգարանների տեղադրման հնարավորությունը: Կենցաղային կեղտաջրերը և կենսագործունեության արգասիքները համապատասխան կազմակերպությունների կողմից, պայմանագրային կարգով, պարբերաբար կհեռացվեն:

Ձկնային տնտեսությունը տեղակայված է ընկերության սեփական հողակտորի վրա, որի մակերեսը կազմում է 4.51 հա (անշարժ գույքի սեփականության վկայական, գրանցված պետական միասնական գրանցման N 03-081-0161-0001 համարի տակ), որը կցված է սույն հայտին, որպես հավելված: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության: Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների:

Ի տարբերություն սաղմոնազգի ձկնատեսակների, նախատեսվող ձկնատեսակների բուծման համար ավազաններում ջրի մշտական հոսքի ապահովման անհրաժեշտություն չկա, ուստի ջրի արտահոսք նույապես չի նախատեսվում:

Ավազանների կառուցումից հետո նախատեսվում է հարակից տարածքների բարեկարգում և կանաչապատում **Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:**

1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

Նախաձեռնողն իր գործունեության ընթացքում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում

են շինարարության ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

Դրանք են՝

- ՀՀ Հողային օրենսգիրք
- ՀՀ Ջրային օրենսգիրք
- ՀՀ Անտառային օրենսգիրքը
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- „Կենդանական աշխարհի մասին„ ՀՀ օրենք
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենք
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը
- ՀՀ կառավարության 2008թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-ն որոշում
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշում
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշում
- «ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» որոշում:
- ՀՀ կառավարության 2011 թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2017 թ-ի նոյեմբերի 2-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և հայաստանի հանրապետության

կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-ն որոշումը:

- ՀՀ կառավարության 2017 թ-ի դեկտեմբերի 14-ի «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու և հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1643-ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 108-Ն որոշումը:

Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ


- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա
- (CITES) (Վաշինգտոն)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Վարչական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում: Գյուղը տեղակայված է Մասիսի

տարածաշրջանում, Մասիս քաղաքից 10-12 կմ հարավ-արևմուտք: Ունի սահմանամերձ դիրք Թուրքիայի հետ: Մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա, Երևան քաղաքից՝ 20 կմ հեռավորության վրա: Շրջանի բացարձակ բարձրությունը տատանվում է 825-ից մինչև 835մ: Հարևանությամբ գտվում են Միս, Նորամարգ, և Արաքս գյուղերը:



Նկար 3. Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքի քարտեզ

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Երկրաձևաբանական տեսակետից տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 825-835մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ 830-832մ: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգաձալքային-գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էռոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր

լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգովարություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել է Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է սահմանակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների: Տարածքում տեղ-տեղ բարձրանում են ծալքաբեկորավոր հիմքի ելուստներ (Խոր Վիրապ, Սարիպապ, Սալիովիտ) կամ խարամային կոներ (Դավթի բլուր, Մեծամոր):

Բուն դիտարկվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին չորրորդական-ժամանակակից ալուվյալ-պրոլուվյալ առաջացումները, որոնք ներկայացված են կավային և ավազախճային առաջացումներով: Նշված առաջացումներում բացահայտված է գրունտային ջրատար հորիզոն:

Նկարագրվող տեղամասին բնորոշ է հետևյալ երկրաբանական - հիդրոերկրաբանական կտրվածքը՝

0.00-3.3 ավազակավ-կավավազ


3.3-6.5 գետաքար-գլաքար, խիճ ավազի լցնով, ջրատար:

Սեյսմիկ պայմաններ. մարզի գրեթե ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից գտնվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում:

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի», ուսումնասիրվող տարածքը ընկնում է 1 սեյսմիկ գոտում, իսկ գրունտների սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունը՝ $a=300$ սմ/վրկ², $A=0.3g$ (տես նկար 4):

Ուսումնասիրվող տարածքում սողանքային երևույթները բացակայում են: Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի» տեղամասին ամենամոտ սողանքային մարմինները գտնում են ավելի քան 10կմ

հեռավորության վրա՝ Նոր Խարբերդ բնակավայրից արևելք-հարավ-արևելք:



Նկար 4 ՀՀ սեյսմիկ գոտիների քարտեզ

2.3 Նախատեսվող գործունեության տարածքի հիդրոերկրաբանական բնութագիրը

Ընդհանուր նկարագրությունը

1. Լճակի խորությունը - 5.0 մ
2. Առաջացած լճի մակերեսը՝ շուրջ 4.5 հա
3. Շահագործվող սյան տրամաչափը -
4. Լճակի առաջացման ժամանակը - մինչև 2000թ

5. Շահագործման ռեժիմը - նախատեսվում է մշտական
6. Հորատման նպատակը և շահագործման սկիզբը - արտադրական և ձկնաբուծության
7. Ջրերի տիպն ըստ օգտագործման - արտադրական, ձկնաբուծության
8. Սանիտարական վիճակը - բավարար է օգտագործման նպատակի համար
9. Տեխնիկական վիճակը - բավարար է օգտագործման նպատակի համար
10. Հորատման լուծույթի տիպը - -
11. Կավազրկման եղանակը - -
12. Հորատման եղանակը - -
13. Ջրհորի թիվը - 1 (մեկ) լճակ

Զտիչի բնութագիրը

14. Ջրատար հորիզոնի համարը - 1
15. Զտիչի տրամաչափը և տիպը - առանց գտիչի
16. Զտիչի տեղադրման խորությունը - բացակայում է

Ջրատար հորիզոնի բնութագիրը

17. Ջրերի բացահայտման խորությունը - 3.5 մ
18. Ջրերի վերականգնման մակարդակը- 3.0մ երկրի մակերևույթից ցածր
19. Ջրատար հորիզոնի մեկուսացման եղանակը և միջակայքը - առանց մեկուսացման
20. Պոմպի տիպը և տեղադրման խորությունը - նախատեսվում է տեղագրել Marquis մակնիշի մակերևութային պոմպ

Ջրատար հորիզոնի փորձարկման արդյունքները

21. Արտամղման տիպը և եղանակը - -
22. Ծախսը (Q_i, O₂, Q_j) - նախատեսվում է 30 լ/վ
23. Արտամղման տևողությունը -

Ջրերի որակը

24. Նմուշարկվման ժամանակը - արխիվային տվյալներ
25. Նմուշարկվման խորությունը - գրունտային հորիզոն
26. Ջրի ջերմաստիճանը - 19.0°C
27. Ջրածնային ցուցիչը (pH) - 8.2
28. Ընդհանուր կոշտությունը -16.0 մգ. համ/լ
29. Չոր մնացորդը (փորձնական) - 1446 մգ/լ
30. Հոտը - անհոտ
31. Համը - անհամ
32. Գույնը - անգույն
33. Քիմիական տարրերի պարունակությունը
34. Cl⁻ -177.5, SO₄⁻ - 604.02, H CO³ -366.0, (Na+K)⁺-199.64, Ca²⁺-160.32, Mg²⁺-85.12
35. Շահագործվող ջրատար հորիզոնի աղային կազմի բանաձևը (ըստ Կուրլովի)

SO₄ 53 HCO₃ 25 Cl 21

Mi.6 -----

Na+K 36 Ca 34 Mg 29

Լրացուցիչ տեղեկություններ՝ Լճակում ջրի մակարդակի հիդրոերկրաբանական մշտադիտարկումներ կատարելու համար անհրաժեշտ է տեղադրել ջրաչափական սանդղակ:

ՀՀ հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոնը Նախաձեռնողի հետ կնքած պայմանագրի համաձայն տրամադրել է դիտարկվող տարածքի վերաբերյալ հիդրոերկրաբանական տեղեկատվություն (տես հավելված 1):

2.4 Կլիմա


Շրջանը ներառված է մեկ՝ չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 5), ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40° իսկ ձմռանը՝ -10°C):

Տարածքում օդի բազմամյա միջին տարեկան ջերմաստիճանը 11.9 °C է: Բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը՝ 235 մմ, իսկ գոլորշիացումը 400 մմ:

Տասնօրյա առավելագույն ձյան ծածկույթը կազմում է 35մմ:

Կայուն ձյան ծածկույթը գոյանում է դեկտեմբերի 15-ից և պահպանվում է մինչև մարտի 15-ը: Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Անհողմությունները կազմում են 29%:

Ստորև 3-7 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալների):



Նկար 5: ՀՀ տարածքի կլիմայական գոտիների քարտեզ

«Արտաշատ» օդերևութաբանական կայանի կլիմայական տվյալներ

Աղյուսակ 3.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները														
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեդպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	-29.0	43.0

Աղյուսակ 4.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79

Աղյուսակ 5.

Տեղումների քանակը ըստ ամիսների, մմ												
Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254
18	20	32	36	46	34	27	22	28	36	31	25	43

Աղյուսակ 6.

Չնաձածկույթը		
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնաձածկույթով օրերի քանակը	Ջյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
40	35	46

Աղյուսակ 7.

Քամիներ												
Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
920.2	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.4	7
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7			
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	15	74		
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6			
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80		
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3			
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85		
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0			

2.5 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայան նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում չկա, սակայն համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ կարելի է ընդունել տարածքի օդի ֆոնային աղտոտվածության հետևյալ ցուցանիշները.

- Փոշի՝ 0.2մգ/մ^3 ,
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/մ^3 ,
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/մ^3 ,
- Ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/մ^3 :

Ուսումնասիրվող տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել փոշի 0.2մգ/մ^3 , ծծմբի երկօքսիդ 0.02մգ/մ^3 , ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ^3 և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ^3 :

2.6 Աղմուկի մակարդակ

Շինարարության ընթացքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն շինարարական տեխնիկաները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Նախատեսվող գործունեության տարածքերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող ներմերի):

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության տարածքի հեռավորությունը բնակավայրերից, գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):


Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

2.7 Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքն իր ծագումով կապված է Մեծամոր գետի հիդրոլոգիական ռեժիմի հետ: Գետի տարածքի եզրագծից հեռավորությունը կազմում է 150 մ: Մեծամոր կամ Սնջուր, գետը գտնվում Հայաստանի Արարատի և Արմավիրի մարզերում: Ունի 40 կիլոմետր երկարություն, Հայաստանի մյուս գետերի համեմատությամբ ամենահաստատուն ռեժիմ ունեցող գետն է: Սկիզբ է առնում Մեծամոր լճից և սնվում Արագածի ստորոտում գտնվող աղբյուրներից, հոսում է շատ դանդաղ, մեծ մասամբ ճահճապատ ավերի միջով և ապա թափվում Արաքս: Մեծամորն Արաքսի գետախառնուրդից մոտ 15 կիլոմետր հեռավորության վրա իր մեջ է ընդունում Քասաղ գետը և դառնում Հայաստանի ամենաջրառատ գետերից մեկը: Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչյար գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք՝ ամոնիում իոնով և նիտրիտ իոնով, Ռանչյար գյուղից ներքև՝ մանգանով:

Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, արսեն, երկաթ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
	11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	Լուծված թթվածին, ԹՔՊ, ֆոսֆատ իոն, արսեն, մանգան, երկաթ, բոր	3-րդ	4-րդ
		Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
	0.5 կմ գյ. Ռանչյարից ներքև (42)	Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, արսեն, բոր	3-րդ	4-րդ
		Մանգան	4-րդ	

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



Նկար 6 Մեծամոր գետի որակի մոնիտորինգի դիտացանց

2.8 Հողային ծածկույթ

Հող, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է


մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Նախատեսվող գործունեության տարածքը ներկայացված է աղուտ-ալկալի հողերով: Աղուտ-ալկալի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի խոնավ և գերխոնավ հատվածներում, որտեղ գրունտային ջրերը հանքայնացված են և գտնվում են երկրի մակերեսից 0,5-2.5մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արարատյան հարթավայրում կազմում է 24հազ.հա: Դրանք բնութագրվում են ուժեղ աղակալվածությամբ (1-3%), կարբոնատների զգալի պարունակությամբ (10-16%), բարձր ալկալիացվածությամբ (25-80%), որոնց յուրացումը կարող է իրականացվել միայն քիմիական մելիորացման ճանապարհով: Այս հողերն ընդգրկված են համայնքների այլ հողերի կազմում, որոնք հիմնականում չեն օգտգործվում: Հողաբուսական շերտի գոյացում նախատեսվող գործունեության տարածքում գրեթե տեղի չի ունենում: Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է Նկար 7-ում:




Նկար 7. ՀՀ Հողային ծածկույթը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում կիսաանապատային լեռնահարթավայրային (500-1000մ.ծ.մ) լանշաֆտային գոտում: Նախատեսվող գործունեության տարածքի շրջանի հողերը ներկայացված են մարգագետնային գորշ և աղուտ-ալկալի տիպերով: Սահմանափակ տարածում ունեն նաև ավազուտները:



Նկար 8 Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Հայաստանի Հանրապետությունում ծանր մետաղներով աղտոտված հողատարածությունները կազմում են շուրջ 50 հազար հեկտար, որից 20 հազար հեկտարը ունեն միջին և ուժեղ աղտոտվածության աստիճան: Տարբեր տարածքներում ծանր մետաղների պարունակությունը 5–40 անգամ գերազանցում է ֆոնային տարածքների պարունակության ցուցանիշներին: Հողի կտրվածքի խորությամբ ծանր մետաղների խտության կտրուկ նվազումը վկայում է այն մասին, որ այդ տարածքների աղտոտումն ունի տեխնածին ծագում: Նախատեսվող գործունեության տարածքը գտվում է թույլ աղտոտված հողատարածքների գոտում (Նկար 9, աղյուսակ 8): Տեղեկատվության աղբյուրը Հողի էկոլոգիա ուսումնամեթոդական ձեռնարկ (ՂԱԶԱՐՅԱՆ Կ. Ա., ԽԱԶԱՏՐՅԱՆ Հ. Է., ԳԻԻԳՈՐՅԱՆ Կ. Վ.):



Նկար 9 Հայաստանի Հանրապետությունում ծանր մետաղներով աղտոտված հողատարածքները

Աղյուսակ 8

Հողի աղտոտվածության աստիճանը			
Աղտոտիչ տարրը		Գումարային Zc	
Գերազանցում է ֆոնը >50%-ից, բայց բարձր չէ ՍԹԽ-ից	Թույլ աղտոտված	16 – 32	Թույլատրելի

2.9 Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք, ընդերքի պաշարների հետ հավասարապես, երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի էլակետային տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված


համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից:

Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ գրեթե ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տարածքներում (ՀՀ Կարմիր գրքում, 2010թ.) գրանցված բույսերի և կենդանիների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

Տվյալ տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության: Տարիներ շարունակ ուսումնասիրվող տարածքը շահագործվել է որպես ձկնաբուծարան, հարակից տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ նախատեսվող գործունեության տարածքի հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների և բույսերի հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (գյուղատնտեսություն, բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ ենթակառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) բույսերի և կենդանիների թիվը զգալիորեն կրճատվել է, ուստի ավելի նպատակահարմար է բուսականության մասին տեղեկատվությունը ներկայացնել տարածաշրջանի կտրվածքով:

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ) և գրավում է կիսաանապատային լեռնահարթավայրային (500-1000մ.ձ.մ.) լանշաֆտային գոտին, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:



Նկար 10 Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի (2009թ.)


Երևանի ֆլորիստիկ շրջանը Հայաստանում երկրորդն է բուսատեսակների թվով, որոնց թիվը 1920 է : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է (700-1700մ.ծ.մ.): Բուսականության հիմնական տիպերն են՝ կիսաանապատներ, աղուտացված ճահիճներ, անապատ, տափաստաններ, գիհու նոսրանտառներ: Էնդեմիկ բույսերի քանակը՝ 46 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակերի թիվը՝ 144 է, ըստ (,Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ):

Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆլորայի ու ֆաունայի վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ (ՀՀ բույսերի և կենդանիների

Կարմիր գրքերում 2010թ.) գրանցված բույսերի առկայությանը:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է մոտավորապես 830-832մ բացարձակ բարձրությունների վրա: Այստեղ բուսականության հիմնական տիպերն են կիսաանապատային բուսականություն, ներառյալ ավազային անապատներ և աղուտներ: Բուն ուսումնասիրվող տարածքում անտառածածկ տարածքներ չկան:

Ուսումնասիրվող տեղամասի շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում ի հայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով:



Նկար 11 Հայաստանի Հանրապետության բուսական ծածկույթը

Տեղամասի սահմաններում համատարած բուսական ծածկույթ չի ձևավորվում, ինչը պայմանավորված է այն փաստով, որ տեղամասը տարիներ

շարունակ շահագործվել է որպես ձկնաբուծարան: Տարածաշրջանի բուսատեսակներից որպես դոմինանտ կարելի է նշել անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*) և սովորական եղեգը (*Phragmites communis*), որն աճում է գետի բնական հոսքի հարևանությամբ՝ առավել ճահճացած հատվածում: Ջրային բուսականություն Արաքս գետին բնորոշ չէ, քանի որ գետի ջրերը արագահոս են և պղտոր, ինչպես նաև հազեցած են միներալային մասնիկներով:

Թռչնաշխարհի ներկայացուցիչներից տեղամասում դոմինանտ են մոխրագույն ագռավ, սովորական կաչաղակ, տնային ճնճղուկ, արտույտ: Ինչպես նաև անձրևորդեր, մրջյուններ, սարդեր, կանաչ դողոշ, ծղրիդ: Խոշոր կաթնասուններ, դրանց բներ կամ որջեր տեղամասի տարածքում առկա չեն, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայցվող տեղամասը տարիներ շարունակ շահագործվել է որպես ձկնաբուծարան, հարակից տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով:

Արաքս գետի ջրերում հանդիպում են թեփուկ, ճանառ, լոք, կամրմրախայթ:

Հայցվող տեղամասի շրջանում Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են.

- միկրոկենտում մարջանանման – վտանգված տեսակ է, հայտնի է Մասիս և Բուրաստան գյուղերի շրջակայքում՝ աղակալած ճահիճներում և աղուտներում, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,

- հիրիկ մուսուլմանական – վտանգված տեսակ, աճում է Մխչյան և Մասիս գյուղերի շրջակայքում՝ տեղամասից 4-5կմ հեռավորության վրա,

- ջրահարս փոքր – խոցելի տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 5.5կմ հեռավորության վրա,

- կղմուխ Օշեի – վտանգված տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 5.5կմ հեռավորության վրա,

- բիեներցիա շուրջաթև - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Մասիս գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 4կմ հեռավորության վրա:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից ուսումնասիրվող

տեղամասի շրջանում հայտնի են.

- Ուբադջի ճպուռ – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Բուրաստան գյուղի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա,

-Աղավնաբազե- Առավելապես չվահյուր՝ հանդիպում է ք. Երևանի շրջակայքում և Հրազդանի շրջանում, նաև ձմեռող

- Ոտնացուլիկ- Հայաստանում հիմնականում մնադրում է Արարատյան հարթավայրում ինչպես նաև Արփի ու Սևանա լճի շրջակայքում:

- Խայտաբաղ- Աշնանային և գարնանային չուի շրջաններում հանդիպում է Սևանա լճի ավազանում, Արփի լճում և Արաքս գետի գերիսոնավ տարածքներում:

-Մարգագետնային ծիծառակտցար- Չուի շրջանում հանդիպում է Շիրակի, Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում: Բնադրավայրեր հայտնաբերվել են Արմավիրի (գ. Տարոնիկ), Արարատի (Արմաշի ձկնապուծական տնտեսություն) և Գեղարքունիքի (Սևանա լիճ) մարզերում:

-Բզակտուց -Հանդիպում է Արաքս գետի հովտում և Սևանա լճի ավազանում

-Միմպեկտա ճպուռ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Աշտարակ քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից շուրջ 8կմ հեռավորության վրա,

- Վան Բրինկի նետիկ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,

- Սնծովյան ճպուռ – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 5.5կմ հեռավորության վրա,

- Անդրկովկասյան տակիրյան կլորագլուխ – խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ, հատնի է Արտաշատի տարածաշրջանի նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում,

- Փոքր ճագարամուկ - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հայտնի է Արարատի մարզի կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած

բիոտոպերում, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:

Դիտարկվող տարածքից 650մ հեռավորության վրա գրանցված է Բլրային արծիվ Կարմիր գրքային տեսակը, *Aquila heliaca Savigny, 1809* Կարգ՝ բազեանմաններ, *Falconiformes* Կարմիր գրքային տեսակը: Կարգավիճակը՝ Հայաստանի ֆաունայի համար անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable C2a(ii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(ii):

Քուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան, քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Ուստի դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

2.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60-70%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Ուսումնասիրվող տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում : Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում:



Նկար 12. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Արարատի մարզում, հայցվող տեղամասից մոտ 20կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա, երևակման տարածքից ավելի քան 20կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մետ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի

համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Տեղամասից մոտ 25կմ հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Ուսումնասիրվող տեղամասից մոտ 18կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Ուսումնասիրվող տեղամասի տարածքում, ինչպես նաև մոտակա բնակավայրերի և դրանց հարակից տարածքներում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Ուսումնասիրվող տեղամասին ամենամոտ, սակայն ավելի քան

20կմ հեռավորության վրա է գտնվում «Դաշտաքար» քարանձավ բնության հուշարձանը, որի տեղադիրքն է Դաշտաքար գյուղից 0.2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա:

Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ և համաձայնագրեր, որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև բնապահպանական տեսակետից մի շարք արժեքավոր տարածքներ, որում ներառված 23 տարածքներից 8-ը ընդգրկված են Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում (<http://emerald.eea.europa.eu/>):

Ներկայումս Հայաստանի «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքների նախնական ցանկը գտնվում է վերանայման փուլում:

Ուսումնասիրվող տեղամասը չի գտնվում «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքներից որևիցե մեկի սահմաններում: Հայցվող տեղամասի շրջանում են գտնվում Էմերալդ ցանցի «Խոսրովի անտառ» և «Խոր Վիրապ-Արմաշ» պոտենցիալ տարածքները :

«Խոսրովի անտառ» պետական արգելոց տարածքն զբաղեցնում է 63794.7 հա մակերես, ընդգրկում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, Ուրցի լեռնաշղթայի ստորոտը, Երախի լեռնաշղթան, «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը, մինչև Ազատ գետի կիրճն ընկած տարածքը՝ ներառյալ Երանոս լեռը: Պոտենցիալ տարածքի և ավազի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է մոտ 20կմ:

«Խոր Վիրապ-Արմաշ» պոտենցիալ տարածքն զբաղեցնում է 6998.2 հա մակերես, ընդգրկում է «Խոր Վիրապ» արգելավայրը և «Արարատյան աղակալած ճահիճներ» բնության հուշարձանը՝ ներառյալ մինչև Նախիջևանի ինքնավար

հանրապետության հետ սահմանը և հարավում Արաքս գետն ընկած տարածքները: Պոտենցիալ տարածքի և ուսումնասիրվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է մոտ 17կմ:

2.11 Պատմամշակութային հուշարձանների ցանկը

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Ռանչպար համայնքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Հետևաբար ուսումնասիրվող տեղամասում ծրագրավորվող աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Արարատի մարզի ընդհանուր տարածքը՝ 2096քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7 %-ը:

Մարզն ունի շուրջ 258.9 հազար բնակչություն, որից 73.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 185.9 հազարը՝ գյուղաբնակ (71%): Արարատի մարզի բնակչության խտությունը՝ 141 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա, Արմավիրի մարզի բնակչության խտությունը կազմում է 215 մարդ 1 քկմ-ի վրա, այն դեպքում երբ ՀՀ-ում միջին խտությունը կազմում է 101 մարդ: ՀՀ-ում ամենաբարձր բնակչության խտությունը գրանցված է մայրաքաղաքում՝ 4815 մարդ 1 քկմ-ի վրա: Արարատի մարզը այս ցուցանիշով մարզերի մեջ գրավում է 2-դ տեղը Արմավիրից հետո:

Մարզի բնակչությունը համարյա հավասարաչափ տեղաբաշխված է 3 տարածաշրջաններում: Մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ ամբողջ ազգաբնակչությունը կազմում է 258.9 հազար մարդ, որից Արտաշատի տարածաշրջանում 90.4 հազար մարդ, Արարատի տարածաշրջանում

89.5 հազար մարդ, Մասիսի տարածաշրջանում՝ 79 հազար մարդ:

Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

ՀՀ Արարատի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 128.1 հազար մարդ է, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 49.5%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության կշիռը Արարատում գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և Արմավիրի մարզի ցուցանիշը:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշերն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝ արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Ռանչպար համայնքի մասին ընդհանուր տեղեկություններ

Մակերես՝ 14.9կմ²

Բնակչություն՝ 1982

Ռանչպար, գյուղը տեղակայված է Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում, Մասիս քաղաքից 10-12 կմ հարավ-արևմուտք: Ունի սահմանամերձ դիրք Թուրքիայի հետ: Մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա, Երևան քաղաքից՝ 20 կմ հեռավորության վրա:

Գյուղը հիմնադրվել է 1873 թվականին: Նախկինում ունեցել է Շոռ Քյոլանլու, Ջաֆարիսան, Ռանչբար, Ռաշպար անվանումները: Ռանչպար-պարս.ՄՇԱԿ,Հողագործ: Գյուղը ընկած է Մերձարաքսյան գոգավորությունում, Մեծամոր և Արաքս գետերի միջագետքում: Ծովի մակարդակից ունի 830 մ բարձրություն:

Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների՝ Ռանչպարի մշտական

բնակչությունը կազմել է 1413, առկա բնակչությունը՝ 1385 մարդ[1]: Նախկինում բնակեցված է եղել աղբբեջանցիներով[2], 1988 թվականից այստեղ են հաստատվել Բաքվից և Գանձակից բռնագաղթած հայեր:

Գյուղն ունի 377 տնտեսություն, դպրոց, գրադարան, բուժկետ: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 783,5 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 265 հա: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 154,2 հա, կան խոտհարքեր: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ: Գյուղն ունի ձկնաբուծական տնտեսություն:

Արդյունաբերություն չունի:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1 Հիմնական բնապահպանական ռիսկերը

- Ավազանների կառուցման աշխատանքների արդյունքում կենդանիների կենսապայմանների ձևափոխություններ,
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում,
- Շինարարության ընթացքում դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,
- Շինարարական տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,
- Բնական լանդշաֆտի ձևափոխում:

4.2 Շինարարության ընթացքում ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- Օդային ավազան
- Մակերևութային ջրեր
- Հողային ռեսուրսներ
- Կենսաբազմազանություն

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- Բնակչության առողջություն
- Բնակչության կենսակերպ
- Տնտեսական գործունեություն /հիմնականում գյուղատնտեսություն/
- Ենթակառույցվածքներ

**5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ,
ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա բնական միջավայրի որակի պահպանության և մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը տարբեր ազդեցությունների գիտականորեն հիմնավորված, բնակչության առողջությունը և էկոհամակարգերի անվտանգությունը երաշխավորող սահմանային թույլատրելի մեծություններն են, որոնք հաստատվում և փոփոխվում են ՀՀ շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների կողմից՝ հաշվի առնելով երկրի բնական պայմանները, գիտատեխնիկական պահանջները, միջազգային ստանդարտները:

Սահմանային թույլատրելի մեծություններն ընդգրկված են ՀՀ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգում և օրենսդրության մաս են կազմում:

Ելնելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ստորև բերվում են ամբողջ գործունեության ազդեցությունները և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

Այս բոլոր ազդեցությունները ունեն ժամանակավոր, կարճատև բնույթ և շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն վերականգնման աշխատանքներ, որոնք թույլ կտան գործնականում ամբողջությամբ վերացնել բացասական ազդեցությունները:

Շինարարության ընթացքում առաջանում են շինարարական և կենցաղային թափոններ, որոնց ոչ պատշաճ կառավարումը նույնպես պարունակում է բնապահպանական ռիսկեր:

Ազդեցությունների նվազեցումը և բացառումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հնարավոր ազդեցությունների նկարագիր

Նախատեսվող գործունեության նորմատիվ պահանջներն են՝

- օդը, ջուրը, հողն աղտոտող վնասակար նյութերի առավել թույլատրելի խտությունների չափերը.
- վնասակար նյութերի սահմանային թույլատրելի չափերն արտանետումներում և արտահոսքերում.
- աղմուկի, վիբրացիայի և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները.
- հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները.
- գյուղատնտեսական և անտառային հողերի պահպանության կանոնները.
- սանիտարական պաշտպանիչ գոտիների նվազագույն չափերը.
- ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N781 որոշման պահանջներին համապատասխան նախատեսել բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ.
- ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենքի համապատասխան կիրականացվի կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումները
- բնակչության և նրա առանձին խմբերի առողջական վիճակը բնորոշող ցուցանիշները:

Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ տվյալ գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը:

Տնտեսվարողը պարտավոր է գործող նորմատիվներին համապատասխան ապահովել անվտանգության կանոնները՝ կանխարգելող, մեղմացնող միջոցառումների (մաքրող սարքավորումների, վնասազերծող կայանքների, արգելափակող միջոցների, օդափոխության, թափոնների վնասազերծման, սանիտարական գոտիների և այլն) միջոցով:

- Շինհրապարակներում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը պետք է արգելվի,
- Մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա պետք է տեղադրված լինեն կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի

արտանետումը մթնոլորտ

- Թափոնները պարբերաբար դուրս բերել շինարարական տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառել:
- Արգելվում է արտհրապարակից դուրս խախտել լրացուցիչ տարածքներ, տեղադրել թափոններ և այլն:

5.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանի աղտոտումը տեղի է ունենում շինարարական աշխատանքների փուլում: Շինարարության ընթացքում աշխատող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Այդ ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- Շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվաղողերը լվանալ,
- Պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- Շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- Պարբերաբար իրականացնել տեխնիկայի շարժիչների կարգաբերում, գոծիչների տեղադրում արտանետման խողովակների վրա:
- Չոր եղանակների ժամանակ իրականացնել խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:
- Հակահրդեհային միջոցառումների կիրառում:

5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Շինարարության ժամանակ ջրային ռեսուրսները օգտագործվում են փոշենստեցման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

-փոշենստեցման համար ջրցանը իրականացվում է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք:

5.3 Հող

Բուն դիտարկվող տարածքը հողի բերրի շերտը գրեթե բացակայում է, սակայն պետք է նշել նաև ,որ տարածաշրջանին բնորոշ են աղի-ալկալի հողերը: Այնուամենայնիվ շինարարական աշխատանքների ընթացքում հողի բերրի շերտի հայնաբերման դեպքում օրենքով նախատեսված կարգով այն կպահեստավորվի առանձին լցակույտով:

5.4 Թափոններ

Նախաձեռնողի գործունեության արդյունքում գոյացող թափոնների ցանկ՝

- *Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի/*

Ծածկագիրը՝ 9120040001004:

Վտանգավորության դասը՝ 4:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բաղադրությունը - թուղթ, ստվարաթուղթ՝ 35-40 %, պոլիէթիլեն՝ 30-35%, ապակի 5-6 %, ռետինե ձեռնոցներ՝ 3-4 %, մետաղական տարաներ՝ 15-20%, այլ՝ 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, առաջացնում է տարածքի աղտոտում,

Էկոթունավոր է:

Թափոնները գոյանում են կազմակերպության աշխատակիցների կենսագործունեության և տարածքների մաքրման աշխատանքների արդյունքում: Կազմակերպության տարածքում կտեղագրվեն պլաստմասե աղբամաններ, որոնցում կկուտակվի կենցաղային աղբը մինչև աղբավայր տեղափոխելը: Թափոնները կտեղափոխվեն Ռանչպար համայնքի աղբավայր, որի համար համայնքապետարանի հետ օրենքով սահմանված կարգով կկնքվի համապատասխան պայմանագիր:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 12 տոննա:

• *Բանեցված օղաճնշիչ դոզեր*

Ծածկագիրը՝ 5750020013004:

Վտանգավորության դասը՝ 4:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բաղադրությունը - բուտադիենային կաուչուկ 98%, պողպատ 2%:

Բնութագիրը՝ պայթյունավտանգ չէ, սակայն կրակի առկայությամբ կարող է այրվել, թունավոր է շրջակա միջավայրի համար:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Դոզերը պարբերաբար փոխարինվում են նորերով: Ընդհանուր առմամբ բանեցված դոզերը շրջակա միջավայրում քայքայվում են մոտ 100 տարում: Դոզերի շփումը անձրևաջրերի և գրունտային ջրերի հետ առաջացնում է որոշ տոքսիկ օրգանական նյութերի /դիբութիլ ֆտալատ, ֆենատրապեն և այլն/ լվացում» որոնք ընկնելով շրջակա միջավայր բացասական ազդեցություն են թողնում հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկումը, ինչպես նաև դոզերը փոխարինվելու են ավտոտեխսպասարկման կայաններում:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 0.4 տոննա:

- *Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան*

Ծածկագիրը՝ 9211010013012:

Վտանգավորության դասը՝ 2:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բաղադրությունը - պլաստմասե իրան 15%, կապարե թիթեղներ 65-70%,
Էլեկտրոլիտ /ծծմբական թթվի լուծույթ/ 15-20%:

Բնութագիրը՝ Էլեկտրոլիտը կոռոզիոն ակտիվ է, հրդեհապայթյունավտանգ չէ, թունավոր է շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար, ծծմբական թթուն առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթի զրգովածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելիս դժվարանում է շնչառությունը, առաջանում է հագ, երբեմն լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ: Կապարը կուտակվում է օրգանիզմում՝ առաջացնելով քրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա: Պլաստմասան ֆիզիոլոգիական տեսանկյունից համարյա անվնաս է: Սրանց քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ, որոնք ընկնելով մարդու օրգանիզմ աննշան մասն է ներծծվում մարսողական համակարգով: Ֆտալատները կարող են չնչին չափով զրգռել մաշկը և լորձաթաղանթը: Բույսերի վրա ֆտալատների ազդեցության ժամանակ կարող են առաջանալ քլորոզներ:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները շահագործման համար պիտանելիությունը կորցնելու դեպքում փոխարինվում են նորերով:

Ընկերության կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկումը, ինչպես նաև կապարե կուտակիչները փոխարինվելու են ավտոտեխսպասարկման կայաններում:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 0.2 տոննա:

- *Իրենց սպառողական հասկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ*

Ծածկագիրը՝ 5410030202033:

Վտանգավորության դասը՝ 3:

Ֆիզիկական բնութագիրը՝ հեղուկ:

Բաղադրությունը - յուղ 95,7 %, մեխանիկական խառնուրդներ 1,2%, ջուր 2%, սուլֆատային մոխիր 1,1%:

Բնութագիրը՝ դյուրավառ է, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոմեքենաների շարժիչների յուղման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները՝ յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով: Յուղերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով:

Ընդհանուր առմամբ շարժիչային յուղերը, հանդիսանալով նավթավերամշակման արդյունք և հիմնականում կազմված լինելով տարբեր բարձրամոլեկուլային և ցածրամոլեկուլային ածխաջրածինների խառնուրդից, վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար: Ընկնելով շրջակա միջավայր բանեցված շարժիչային յուղերի մի փոքր մասն է ենթարկվում քայքայման և հեռացվում բնական պրոցեսների արդյունքում: Իսկ դրանց հիմնական մասը հանդիսանում է հողի, ստորերկրա և մակերնույթային ջրերի ու մթնոլորտի աղտոտիչ: Բանեցված շարժիչային յուղով հողի աղտոտման ժամանակ հողային օրգանիզմների համար ստեղծվում է նոր էկոլոգիական պայմաններ: Այս հողերում տեղի է ունենում պեդոբիոտների տեսակային էկոլոգիական բազմազանության կրճատում ավտոտրոֆ ասիմիլյացիայի վատացում, հողային կենդանիների ֆունկցիոնալ ակտիվության ու հողի ֆերմենտային ակտիվության անկում: Դեպի հողի մակերես նավթամթերքի հոսքից հետո առաջին հերթին այն ներծծվում է հող և խախտում է հողի ջրաօդային հավասարակշռությունը: Դրա արդյունքում առաջանում է հողի դեֆլյացիյա, հարթ և գծային էրոզիա: Դա էլ իր հերթին բերում է հողի աղքատացմանը և կենսաարտադրողականության անկմանը:

Թափոններն անհրաժեշտ է առանձնացնել և տեղադրել հերմետիկ փակվող

տարաներում, որոնք գրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրը պետք է ունենա թափված յուղը պահելու հնարավորություն ոչ պակաս քան ընդհանուր ծավալի 5%-ի չափով: Իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդները հատուկ մշակումից հետո կարելի է օգտագործել յուղերի այրման համար առանձնացված կաթսայատներում որպես վառելանյութ:

Նախաձեռնողի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների սպասարկումը, ինչպես նաև ավտոմոբիլային յուղերը փոխարինվելու են ավտոտեխսպասարկման կայաններում:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 0.3 տոննա:

- *Յուղոտված լաթեր*

Ծածկագիրը՝ 5820060001014:

Վտանգավորության դասը՝ 4:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բաղադրությունը - լաթեր 75-85%, յուղ 10-15%, ջուր 5-10%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է, ինքնաբռնկվող, թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի, ջրի աղտոտում:

Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով: Թափոններն առանձնացվում և տեղադրվում են հերմետիկ փակվող տարաներում, որոնք դրվում են մետաղական տակդիրների վրա: Տակդիրն ունի արտահոսած յուղը պահելու հնարավորություն:

Թափոնները կտեղափոխվեն աղբավայր, որի համար համայնքապետարանի հետ օրենքով սահմանված կարգով կկնքվի համապատասխան պայմանագիր:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 0.1 տոննա:

- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող

Ծածկագիրը՝ 3140110008955:

Վտանգավորության դասը՝ 5/ ոչ վտանգավոր:

Ֆիզիկական բնութագիրը՝ պինդ:

Բնութագիրը՝ ոչ հրգեհապայթունավտանգ, ոչ լուծելի:

Բաղադրությունը՝ ավազ և հողագրունտ:

Թափոնները առաջանում են ավազանների կառուցման ընթացքում:

Թափոնների գոյացման չափաքանակը որոշվել է նախագծային հաշվարկների հիման վրա, որը հավասար է 97800 մ³:

Թափոնը կուտակվում է ժամանակավոր լցակայանների տեղամասերում, որի մի մասը օգտագործվում է շինարարության ժամանակ խախտված տարածքների վերականգման, ավազանների եզրային բերմանների բարձրացման, և առկա ճանապարհների բարեկարգման նպատակով: Իսկ մնացած մացը կտրամադրվի (չօգտագործված շինարարական թափոնները, հողագրունտ) նույն ընկերությանը տեսակավորման և վերամշակման համար:

Աշխատանքների ավարտին չօգտագործված և չվերամշակված թափոնները (հողագրունտ) համապատասխան իրավասություն ունեցող մարմնի հետ համաձայնությամբ կտեղադրվի իրենց իսկ կողմից հատկացված վայրում:

Վերը թվարկված թափոնների չափաքանակները և մանրամասն տեղեկատվությունը կներկայացվի Թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծում:

5.5 Բուսական և կենդանական աշխարհ

Շինարարական աշխատանքների իրականացման փուլերում տարածքի կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝ շինհրապարակներից հողագրունտի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, ցնցումները, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները:

Սակայն, ինչպես արդեն նշվել է, տվյալ տարածաշրջանի էկոհամակարգերը ենթարկված են անտրոպոգեն ազդեցության: Նախատեսվող գործունեության տարածքի հարակից տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվել և շարունակվում է օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ նախատեսվող գործունեության տարածքի հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են: Այդ իսկ պատճառով, այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է:

Նախատեսվող գործունեության տարածքի և նախատեսվող գործունեության տարածքի հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Հիմնականում օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհը՝ բարեկարգելով այն: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը կարելի է փաստել, որ տեղանքի կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա նախատեսվող գործունեության տարածքի շինարարությամբ պայմանավորված ազդեցությունը կլինի ոչ էական և կկրի ժամանակավոր բնույթ:

Նախարձեռնողը, ում գործողության ընթացքում հնարավոր է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներին կամ բուսատեսակներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած

գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը (ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17):

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և շինհրապարակներից դուրս:
- Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:
- Շինհրապարակներում, ճանապարհներին և այլ արտադրական տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար:
- Հողագրունտի տեղափոխման ժամանակ, հատկապես չոր եղանակին, բեռնատարների թափքը ծածկել, փոշու արտանետումները հնարավորինս մեղմելու համար:
- Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
- Հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը, եթե այդպիսին առկա է:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:

- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

5.6 Պատմամշակութային արժեքներ

Նախատեսվող գործունեության աշխատանքների տեղամասում պատմամշակութային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում արդյունահանման աշխատանքները, այդ մասին տեղեկացնել պետական լիազորված մարմին և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցան.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ
	Ավազանների կառուցում
Մթնոլորտային օդ	Ցածր կարճատև
Ջրեր	Աննշան
Հողեր	Աննշան
Կենսաբազմազանություն	Աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-

5.7 Սոցիալական ազդեցություն

Շինարարական աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և գուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է ունենան համապատասխան խլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները պետք է ապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Նախաձեռնության հեղինակները պարտավոր են կատարել սոցիալական միջոցառումների պլանը ամբողջությամբ:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Նախատեսվում կազմակերպել երիտասարդների ուսուցում, իսկ մյուս աշխատողները կանցնեն վերապատրաստում:

Նախատեսվող գործունեության տարածքի շինարարության ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա

միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1. Քամու արագության,
2. Անհողմություն, չոր եղանակ,
3. Անհողմություն, թանձր մառախուղ:

Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1. Ավելացվում են ջրցանի ծավալները:
2. Կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:
3. Դադարեցվում են շինարարական աշխատանքները:

Հակահրդեհային անվտանգություն՝ շինարարության փուլում գտնվող օժանդակ կառույցները պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով: Բոլոր այն սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ հակահրդեհային սարքավորումներ, պետք է ունենան ձեռքի կրակմարիչներ:

Անհրաժեշ է նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

5.8 Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Շինարարության ողջ ընթացքում Նախաձեռնողի կողմից իրականացվելու են մշտադիտարկումներ՝ հայտում ներառված բոլոր միջոցառումների

ժամանակին և ճշգրիտ իրականացման, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնհանել 500.0 հազ.դրամ:

Ղիտակետերի տեղադիրքերը և կոորդինատները ներկայացվում են ղիտակետերի տեղադիրքերը ցուցադրող քարտեզում:



Նկար 13 Մշտադիտարկման կետերի քարտեզ

Նախատեսվող մշտադիտարկման ղիտակետի համարներն են՝

Մթնոլորտային օդի համար՝ 3, և 5

Հողային ծածկույթի համար՝ թիվ 4

Մակերևութային ջրերի համար՝ 2 և 1

Նախատեսվող գործունեության և դրան հարող տարածքներում իրականացվելու է կենսաբազմազանության մոնիթորինգ (Նկար 13-ում դեղինով շրջագծված տարածքում) տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մակերևութային ջրեր	Մոտակա ջրահոսքեր	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, դաշտային չափումներ	Ամսեկան մեկ անգամ
Մթնոլորտային օդ	Ազդակիր համայնքների հարևանությամբ	կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ազոտի երկօքսիդ, ծծմբային անհիդրիդ,	չափումներ ավտոմատ չափման սարքերով	Ամսեկան մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Հայցվող տարածքի և ազդակիր համայնքների հարևանությամբ	հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, -	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ

		հողերում նավթամթերքների պարունակությունը		
Վայրի բնություն, կենսամիջավայր , կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Վիզուալ հաշվառում	տարեկան մեկ անգամ

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի բույսերի Կարմիր գիրք, 2010թ.
- Հայաստանի կենդանիների Կարմիր գիրք, 2010թ.
- Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР, 1954г.
- Venomous snakes of Armenia, Aghasyan, A., Aghasyan, L., 2014
- Հայաստանի շանրապետության և Լեռնային Ղարաբաղի երկկենցաղներն ու սողունները Ֆ.Դ.Դանիելյան, Մ.Ս.Սուքեյան, Երևան 2016թ.
- Авагян А.В. Фауна и экология насекомыхных Армении. Автореф. к.б.н. Ереван, 2010.
- Агаджанян Ф.С. Биология и морфологические особенности обыкновенной лисицы в Армении. Автореф. к.б.н. Ереван, 1993.
- Бибиков Д.И. Волк.М.: Наука, 1985.
- Даревский И. С., 1975. Редкие и исчезающие виды земноводных и пресмыкающихся Закавказья. Материалы конф. «Фауна и ее охрана в республиках Закавказья». Ереван: Изд-во АН Арм. ССР.
- Даль К.С. Животный мир АрмССР.т.1.Позвоночные. Изд. АН Арм. ССР,1954
- Касабян М.Г.К экологии закавказского барсука в Армении.Зоосборник Вып.20, Изд-во АН АрмССР,Ереван, 1986.стр 162-173.
- Касабян М.Г. О современном распространении кавказской выдры в Армении. Тез. докл. респ. научн. конф. по зоологии. Изд.НАН РА, Ереван, 2001.стр.62-63.
- Касабян М.Г. Хищные млекопитающие Армении. Автореф. канд. биол. наук. Ереван, 2001.
- Формозов А.Н. Количественный метод в зоогеографии наземных позвоночных животных. Изв. АН СССР. Сер.геогр. 1951. № 2. С. 62 – 70.
- Формозов А.Н. Звери, птицы и их взаимосвязь со средой обитания. М., 1976.
- Adamian, M.S. and Klem, D. Jr. 1999. Handbook of the Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation
- Adamian, M.S. and Klem, D. Jr. 1997. Field guide to Birds of Armenia. Oakland: American University of Armenia Corporation
- Aram Aghasyan, Levon Aghasyan, Eduard Yeghiasaryan, Silva Amiryan. “Amphibians and reptiles in the new edition of the Animals’ Red Data Book of Armenia” Agriculture, Forestry and Fisheries, 2013; 2(2): Pages 77-88,
- “Ecoregional Conservation Plan for the Caucasus 2010” CBC, revised 2012, Tbilisi
- WWF- www.panda.org/armenia
- Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկոլոյցից, 2014 թ